«Շիրակացու ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր

Հանրապետական հանրակրթական բաց օլիմպիադա հայոց լեզվից

2025-2026 ուստարի

8-րդ դասարան

Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում...

Եղիշե Չարենց

Սիրելի՛ բարեկամ, կարդա՛ այս գրվածքը, որը նշանավոր հայ գրող Հակոբ Պարոնյանի ստեղծագործության արևելահայերեն մշակումն է:

## ՔԱՂԱՔԱՎԱՐԻ ԳՈՂԸ

Կատարի՛ր առաջադրանքները:

1. Գրվածքի ո՞ր բառերը՝ որպես բացատրություն կամ հոմանիշ, տրված դարձվածքների կողքին պիտի գրես: Հիշի՛ր, որ մեկ բառ չես գրելու. դրանք մի քանիսն են (5 միավոր):

   Ցուղ ու մեղրի մեջ լինող—հարուստ, ունևոր, մեծատուն, մեծահարուստ

   Աչքի սուրմա թռցնող—գող, թալանչի, ավազակ, կողոպտիչ, ավարառու, ելուզակ

2. Տեքստից գտի՛ր տրվածների հոմանիշները, գրի՛ր համապատասխան տողում (5 միավոր).

   Դրամապանակ - քսակ

   Խազալ--խաչամ

   Զորձ- ցնցոտի, հնոտի

   Խայտալ---ոստոստել/ ոստոստալ

   Արևազալ---առավոտ

3. Տեքստում գտի՛ր և համապատասխան բառի կողքին գրի՛ր տրվածների հականիշները (5 միավոր):

   Ընչազուրկ---հարուստ, ունևոր, մեծատուն, մեծահարուստ

   Դառը---անուշ--------------------------------

   Գոս----դալար--------------------------------

   Անճոռնիակալ--երախտապարտ----------

   Վայրազաբար--մեղմաբար----------------

4. Տեքստում գտի՛ր և դո՛ւրս գրիր հետևյալ արմատներն ունեցող բառերը: Ձմռռանաս բառերը վերլուծել բառակազմորեն, նշել հնչյունափոխությունը առկայության դեպքում (10 միավոր):

Կա---մերձակա = մերձ+կա

Սեր-սիրով = Սիր-սեր+ով /ե-ի/, սիրելի = սիր-սեր+ելի /ե-ի/, սիրալիր =սիր-սեր+ա+լիր /ե-ի/

Ուշ---ապշահար = ապ+ շ-ուշ+ա+հար /ու-ն սղվել է/

Բար—բարի= բար+ի, բարեկիրթ = բար+ի+ա+կիրթ, /ի+ա=ե/ բարեկամ = բար+ի+ա+կամ /ի+ա=ե/

Առ—ավարառու=ավար+առ+ու

5. Համեմատի՛ր արեգակ և դռնակ բառերը. նշի՛ր դրանց նմանությունները և տարբերությունները (5 միավոր):

Նմանություն—երկուսն էլ բառ են, ունեն 6 հնչյուն

Տարբերություն—արեգակ- եռավանկ, կազմությամբ բարդ, երկու արմատ ունի՝ արեգ+ակ/աչք/.

դռնակ-երկվանկ, կազմությամբ ածանցավոր՝ դռն-դուռն+ակ ածանց.

Արեգակ բառի մեջ հնչյունափոխություն չկա, դռնակ բառում ու ձայնավորը դարձել է ը, որը չի գրվում: ԱԿ ածանցը դուռ բառին փոքրացուցիչ իմաստ է տվել, ինչպես սանձ՝ արոռ-արոռակ, թռչուն-թռչնակ և այլն:

6. Տեքստից դո՛ւրս գրիր «քաղաքավարի» բառերը: Ի՞նչ ես կարծում, դրանք ի՞նչ դեր ունեին այս պատմության մեջ (10 միավոր):

Բարի օր, հազար բարի, քաղաքավարի, սիրալիր, խնդրեմ, խնդրում եմ, ծառայել Ձեզ, քաղցրությամբ հարցնել, քաղաքավարությամբ և հեզորեն, սիրով, հարգելիս, համեցե՛ք, բարեկիրթ, շնորհակալություն, երախտապարտ եմ, սիրելի պարոն, բարեկամս, մեղմագին, Ձեզնից խնդրել, շատ սիրով...

Նախ հարուստը սկսեց քաղաքավարի խոսել՝ առանց վախենալու գողի տարճանակից, իսկ գողը ընդօրինակեց նրան: Քաղաքավարի և բարեկիրթ խոսքը փրկեց հարուստին զինված ավազակին: Հենց այդ բարեկիրթ խոսքի շնորհիվ մարդը հետ ստացավ իր ունեցվածքը...

**7.** Քեզ չզարմացրե՞ց գրվածքի ավարտը։ Ի՞նչ ես կարծում ավազակը մոռացե՞լ էր, թե՞ դիտավորյալ էր գողոնը թողել հնամաշ վերարկուի գրպանում։ Ի՞նչն օգնեց հարուստ մարդուն **(10** միավոր**)**։

| Միավոր | Նկարագրություն |
|---|---|
| 10 | 1. Ստեղծագործաբար և հանգամանորեն պատասխանել է հարցերին, դրսևորել է երևակայություն և տրամաբանված մոտեցում։<br>2. Շարադրանքը կառուցված է կուռ տրամաբանության հիման վրա։ Մտքերը ձևակերպում է գրագետ և հստակ։<br>3. Բառապաշարը հարուստ է. կիրառում է պատկերավոր արտահայտություններ։<br>4. Ուղղագրական, կետադրական, քերականական, բառագործածության սխալներ չկան։ |
| 9-8 | 1. Հանգամանորեն պատասխանել է հարցերին, դրսևորել է երևակայություն և տրամաբանված մոտեցում։<br>2. Շարադրանքը կառուցված է կուռ տրամաբանության հիման վրա։ Մտքերը ձևակերպում է գրագետ և հստակ։<br>3. Բառապաշարը հարուստ է. կիրառում է պատկերավոր արտահայտություններ։<br>4. Ուղղագրական, կետադրական, քերականական, բառագործածության 2-3 սխալներ կան։ |
| 7-6 | 1. Բավարար չափով պատասխանել է հարցերին, մասամբ դրսևորել է երևակայություն և տրամաբանված մոտեցում։<br>2. Մտքերը ձևակերպում է գրագետ և հստակ։<br>3. Բառապաշարը հարուստ է. կիրառում է պատկերավոր արտահայտություններ։<br>4. Ուղղագրական, կետադրական, քերականական, բառագործածության 4-5 սխալներ կան։ |
| 5-4 | 1. Մասամբ պատասխանել է հարցերին, երևակայություն և տրամաբանված մոտեցում չի դրսևորել։<br>2. Մտքերը ոչ միշտ է ձևակերպում գրագետ և հստակ։<br>3. Բառապաշարը հարուստ չէ։<br>4. Ուղղագրական, կետադրական, քերականական, բառագործածության 6-8 սխալներ կան։ |
| 3-2 | 1. Հարցերին, գրեթե չի պատասխանել. երևակայություն և տրամաբանված մոտեցում չի դրսևորել։<br>2. Մտքերը գրագետ և հստակ չի ձևակերպում։<br>3. Բառապաշարն աղքատիկ է։<br>4. Ուղղագրական, կետադրական, քերականական, բառագործածության 9-10 սխալներ կան։ |
| 1 | Գրել է շարադրանք, բայց շեղվել է թեմայից, անտեսել է հարցերը։ |
| 0 | 7-րդ առաջադրանքը չի կատարել։ |